Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 782 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԲԱՐԵԿԵՑԻԿ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԵՐՈՒԹՅՈՒՆ»

1.	Ծրագրի նպատակը	Սոցիալական աջակցություն Երևանի, Գյումրու, Արարատի միայնակ, հաշմանդամ ծերերին, ծնողազուրկ, բազմազավակ, հաշմանդամ երեխաներ ունեցող ընտանիքներին: Բարեգործական օգնության տրամադրում տեղահանված, միայնակ և հաշմանդամ ծերերի ու բազմազավակ ընտանիքների խնամքով զբաղվող պետական կառույցներին և ոչ առևտրային կազմակերպություններին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի «Հայ օգնության և զարգացման ընկերություն» (ARDA GLOBAL) շահույթ չհետապնդող կազմակերպություն (ԱՄՆ, Կալիֆոռնիա, 1536 E Վաշինգտոն պողոտա, Փասադենա CA 91104)
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (Երևան, Պարույր Սևակի փողոց 9, ՀՎՀՀ՝ 00057312)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Քաղաք Երևան, ՀՀ Արագածոտնի, Արարատի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզեր: Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	1,005,000,000 դրամ

7.	Բարեգործությունն ստացողը	Երևանի, Գյումրու, Արարատի ընտանիքներ, ինչպես նաև՝ <u>ՀՀ Արագածոտնի մարզի</u> 1) Ապարանի քաղաքային համայնք, 2) Ապարանի թիվ 1 և թիվ 2 մանկապարտեզներ, թիվ 2 միջնակարգ դպրոց, 3) «Սահակ-Մեսրոպ» բարեգործական հասարակական կազմակերպություն: <u>ՀՀ Լոռու մարզի</u> 1) Վանաձոր խոշորացված համայնք, 2) Վանաձորի թիվ 5 և թիվ 30 մանկապարտեզներ: <u>ՀՀ Շիրակի մարզի</u> 1) Գյումրու քաղաքային համայնք, 2) Շիրակի մարզի ավետարանական-մկրտական եկեղեցի: Հայ առաքելական եկեղեցու Արագածոտնի, Գուգարաց և Տավուշի թեմեր և ոչ առևտրային կազմակերպությունների շահառուներ, որոնց անվանական ցուցակը յուրաքանչյուր բեռնարկղի բաշխման ցանկի հետ կներկայացվի լիազորված մարմնի հաստատմանը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի դկտեմբերի 1-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 30-ը Ծրագիրը շարունակական է՝ իրականացվում է 2002 թվականից:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Երևանի 112 և Գյումրու 108 ընտանիքներին ամենամսյա դրամական օգնության և ամենամյա ջեռուցման ծախսերի տրամադրում – 65,400,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում. 2) Բարեգործական օգնության (հագուստ, կոշիկ, սնունդ, բժշկական, հիգիենիկ պարագաներ) տրամադրում – 925,100,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում. 3) Շահառուներին ապրանքների բաշխումն իրականացնելու նպատակով պիկապ բեռնամարդատար ավտոմեքենայի ներմուծում – 14,500,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) բարեգործական օգնության ձեռքբերում կամ ներմուծում (հագուստ, սնունդ, կոշիկ, կահույք, հիգիենիկ և բժշկական պարագաներ) - 925,100,000 դրամ. 2) պիկապ բեռնամարդատար ավտոմեքենայի ներմուծում – 14,500,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Շահառուներին ապրանքների բաշխումն իրականացնելու նպատակով պիկապ բեռնամարդատար ավտոմեքենայի ներմուծում – 14,500,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոններ, Արարատի, Արագածոտնի, Լոռու, Շիրակի և Տավուշի մարզպետարաններ, Երևանի և Գյումրու քաղաքապետարաններ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

07.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ